



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 26

— ՏԵ ՇԱՐԱՐ —

25 ՅՈՒՆԻՍ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳՈՒԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Յր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՑՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճիշդ Պէյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն նոյնքան հրապարակի վրայ կը տրջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ Զեւսի՞թը՝ քէ Կ. Պոլիս, եւ քէ՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — Զեւսի՞թ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր գնահատուին արժանացած են :


Հասր 40 փարս

ԱՐՅՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتابخانه جهان) مطبعه مى — باب مالی جادوى ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի Հաստէսի քիւ 23



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
միանգամայն սեփականներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
լայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Բ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ զիւրադործելին ըլլալուն ըստանդարտ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՍԻՆԿԵՐԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

ԲՆԵՐՍ

(1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .

(2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ.

ԿԱՆԱԹԱՍ

(1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.

(2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

(1. Սուլթան համամ .

(2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13.

ՍԱԻՏԱՐ

2արշը Պօյու, թիւ 120.

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձեռն գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւղզլուի տունը:

ՖԷՆԻՔՍ ՕՐԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ՖԵՆԻՔՍ ԶԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրամ



ՀԻՄՆԱԶԻ ԶԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ժրամ

ՖԷՆԻՔՍ

Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ վարսիք:

ՖԷՆԻՔՍ

Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք ժողովային
կանքի վրայ:

ՖԷՆԻՔՍ

Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չողհնաւի՝ եւ ա-
ռագաստանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ԲԵԼՏԻ ԼԻՅՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասեն-
եակն է Պոլիս, Ալեանաք խան, Թիւ 11—16.

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիպգոր Երկայացուցիչ

Գ. ՏԵՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄՐԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ւ 26

ՇԱՐԱԹ

25 Յունիս 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քննութիւններուն առթիւ. (խմբագրական). — ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ : Նամակ
Յովհաննէս Էֆէնտի Թաւանճեանէ : Արդարաւորութիւնը. — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : Յու-
շատեանի կշեռէն (Ֆանթեզի). — Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ : Յաւակնոց պարոններ. —
ՆԵՐԱԷՍԱԶԱՔԱՐԵԱՆ : Նրեք ոսկինոց գլխարկ եւ խասապ Բօջօ. — Վ. ՓԱՓԱԶԵԱՆ :
Արեւազ եւ Մրցադ (Ոսանաւոր). — ԱՐՇԱԿ ԻՍՊԷՉԷՐԵԱՆ :

ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԹԻԻ

Հիմա որ քննութիւնները սկսած են դպրոցական յարկերու մէջ ու աշա-
կերտներն իրենց ստացած մտաւորական պաշարը կը ցուցադրեն հանրութեան,
իրենց ուսուցչական մարմինէն դատ, հրաւիրեալ քննիչներու առջև, կ'արժէ
որ անդրադառնանք պահ մը այն եղանակին՝ որով քննութիւնները կը վար-
ուին մեր դպրոցներուն մէջ, և որ ընդունուած օրէնք մը դարձած է ալ :

Դադարաւ մը ունենալու համար Պոլսահայ վարժարաններու ամուլերէ/ի
հարցաքննութեանց այս եղանակին՝ բաւական է պղտիկ ձանճրոյթ մը յանձն
առնել ներկայ գտնուելու անոնց ու է մէկին, քննութեան ճիւղը խնդիր չէ,
և ուշադիր դիտելու թէ ինչե՛ր կ'անցնին կը գտնան դասախօսին և աշակեր-
տին, դասախօսին և հրաւիրեալներուն, այս վերջիններուն ու աշակերտներուն
միջև :

Մէկ երկու տարիէ ի վեր ներկայ գտնուելու պատեհութիւնը ունեցանք
մենք հարցաքննութեանց շատերուն, և այսօր կարգը եկած է խոստովանելու

Թէ Պոլսահայ դպրոցներու հարցաքննութեանց եղանակը աննպատակայարմար, անդիմադրելիօրէն ապօրինի և դեռ, բացարձակապէս անհեթեթ աւարտաւոյ պարագաներ ունի իր մէջ, որոնք միանալով իրարու հետ, կ'աւարեալ ըստ իրենթոյս մը կը կալմեն հարցաքննութիւնը ուր ինկող աշակերտը իր ինքնութիւնն ալ կը կորսնցնէ, դիտյաժն ալ կը մոռնայ:

Թէ ինչո՞ւ այսպէս, պիտի պարզենք հոս, յենով մեր ուշադրութեանը հետեւանք եղող համակրաներուն, որոնք այնպէս կը կարծեմ թէ շատերուն ալ եղած պիտի ըլլան:

Նախ որ՝ հարցաքննութեանց հրաւրեալ անձնաւորութիւններուն, կամ տարբեր կերպով, իրր քննիչ հոն ներկայ գտնուողներուն քով մարմաջ մը կայ դասախօսը անպատճառ պղտիկ ձգելու, անոր ջանքերը յօդս ցնդեցնելու, և ստիկա՝ ոչ թէ դատախօսին կամ վարժարանին արժէքը կոտրելու, այլ մանաւանդ բան մը ըրած ըլլալու, զորմի վրայ եղած ըլլալու համար:

Այսպէս, կը տեսնենք որ լոյս ի դասախօսէն, քննիչներն ալ ոտքով ձեռքիո մէջ կ'իյնան, հարցումներու տեղատարափ մը կը թափեն խեղճ աշակերտին դըլխուն որ բոլորովին յանկարծակիի եկած իր դիտյաժն ալ կը շուարի զուրցելու, կը տատանի, կը մնայ: Եթէ արուած հարցումները հարցաքննութեան սահմանին մէջ ըլլան, աշակերտին կարողութեանը համեմատ եղած ըլլան, ապահովաբար խնդիր չը մնար: Ընդհակառակը, Բայց զարմանալի է որ այնպիսի հարցումներ կ'ուղղեն սմանք, այնպիսի խնդիրներու մէջ կուզեն մանեւ, որ բոլորովին կը հակասէ աշակերտին հմտութեան և ուրիշ տղիւնք չունենար այս եղանակը՝ եթէ ոչ ցուրտ արպաւորութեան մը տակ ձգել ներկաներէն շատերը՝ վարժարանին ընդհանուր յառաջդիմութեան մասին:

Ասիկա առաջին պատճառն է, երկրորդ պատճառ մ'ալ կայ որ բոլորովին կը հակասէ հարցաքննութեան նպատակին և հանդիսաւայրը թատր կը հանդիսացնէ տեսակ մը ակադեմական ժողովարարի ուր միտքերը կը բաղխին իրարու, վէճերը ծայր կուտան, այսերը կը շառագունին, և ասոնց բոլորին հանգէպ աշակերտը ի զո՞ւր կ'սպասէ իր մտքին հանդարտութիւնն զգալու ու հարցումի մը պարագային՝ յաջող պատասխան մը տալու:

Վիճաբանութեանց կ'ակնարկիմ, որոնք կը յուզուին մերթ հարցաքննութեանց ատեն մի միայն քննիչներուն մէջ և այնչափ կը յառաջանան որ, մէկ կամ միւս կողմը անպատճառ ստիպուած կ'ըլլայ առնել քուլիւ, տեղի չի տալու համար աւելի ազեղ տեսարաններու:

Կեդրոնական վարժարանի անցեալ տարուան ամառվերջի հարցաքննութեանց ատեն, շատեր կը յիշեն անշուշտ այն միջադէպը որ ծագեցաւ երկու գրաբարագէտներու միջև, գրաբարի հարցաքննութեանց պահուն, և այնպիսի երեւոյթ մ'ստացաւ որ աշակերտներն ալ յուսահատեցան, քննութիւնն ալ իր կարգն ու տարքը կորսնցուց:

Ասիկա եղաւ ինչո՞ւ: Անոր համար որ, վիճաբանողները իրենց հմտութիւնը կուզէին երեւան բերել, կարծես թէ հարցաքննութիւնն իրենց համար պատրաստուած ըլլար, և կ'ուզէին զիրար գետին զարնել, ու իրար ոտնակոխ ընել:

ԱԼՔԱԼԱՄԱԼՈՒԹԵԱՆ ԴԵՄ

ԽՄՈՂԻՆ ԿԵԱՆՔԸ

Կապամբարդիւն այն օրին է

Որ ամենուս ծանօթ է . . .

Իրիկուն է, ժամը մէկին մօտ, մինչ փողոցներու անցողաբարձը դադարած, դիւերուան մօտայլը կը տիրէ միանեծան, ներսը դիւնե-տան օգտին կաղերը ցերեկուան պէս կը լուսաւորեն չորս դին, և կաղի կտուցներէն դուրս պողթկացող բոց-լիւղունները կը բեկ-րիկին խմաններու տօղոյն ճակարին վրայ:

Երեք հոգի նստած են անկիւն մը, երեքին ալ քովի կը ախոռներու վրայ ծրարներ կան ու տեղիքներով ծանրաբեռնալ: Երեքն ալ զրեթէ տարեկից, մէկ աւաղանի մէջ մէկ օր մկրտուածի պէս, մոխիր մաղբերով և օրուան յոգնութիւնը կանակնին ծրարուած:

Երեքին ալ մատներուն մէջ մշտնջենից զլանիկը կը մնայ, նորածագ հրդեհի մը բաց կապոյտ ծուխերով, մինչ իրենք կզղկացած հող, այդ գարշիլի մթնոլորտին մէկ ան-կիւնը, չեն զգար ժամանակին սահիլը, ոչ ալ ժամացոյցին միօրինակ թիքթաքը կը հասնի ականջնուն:

— Աման ճանրմ կղեմես աղա, իրիկուն եղա՞մ մի, ըռախին աչքես քիւրմիւշ կըլլայ կոր . . .

— Պէրէքեաթ ասոր քի յոգնութիւնս կ'առնեմ կոր . . .

— Սահաթը տասուերկու քէն ետքը, հա-ցը աչքիս չերեւար, իլլէ՛ ըռախի . . . կը պատասխանէ Թորիկ աղա, ձեռքը չիչին տանելով, որուն մէջ մատ մը բան մընացեր էր . . .

— Ինծի նայէ միշտ՝, սա չիչէն թաղէ-լէմիշ ըրէ, տես պոյ ցուցուր . . .

— Էյ սանքի չեւանք ալթըն կղեմես աղա, մէջ մը սահաթը նայինք, բէք տու-միշ եղանք զէրէ . . .

— Աման . . . նոր փեսայ չե՞ս ես, հէլ-պէթ տունիդ քէօշէն կանցնիս . . .

— Չէ ճանրմ, մեր մատամը աս առտու քիչ մը ծուռ ձգեցի տէ . . .

— Կնիկ չեն մի օխտը հոգի դենին . . . ան մինչև հիմա չտկուած է . . . հէլէ դուն մէկ հատ մըն ալ տնկէ . . . մէզէ բեր՝ ծօ միշտ . . .

— Ծանրմ քեզի բան մը ըսեմ Թորիկ աղա, սըտէզի մուհաղէթը տունին մէջը չըլլար կոր, պէ պատամ ներս մտար մի, ճըլլը ճըլլը, զլուսս կը տանին կոր, ան կուլայ, մէկալը կը թղկայ. մարերնին մէկ թիւուիւ, անդիինը մէկ պիչիւմ . . . ըո՞ք ես, սըտեղէն կըլլալ տէ տունին չտխախտը ծառք առնել ներսիդիէս չի դար կոր . . .

— Օ՛ . . . չըսե՛ս քի էօմիւր կը քչես կոր կզէր, իմ տեղս ըլլա՞մ նէ ի՞նչ պիտի ընես, նայէ դու լնէն ներս մտայ մի, քիւֆիւրը, անէ՛ծք անձրեւի պէս զլխուս կը թափեն, կընիկս մէկ թառափէն, պղտիկները մէկալ թառափէն, խմածս ալ քիթէս կուգայ կոր, կերածս ալ բերնէս . . .

— Ատամ . . . դուք քառսունական փա-րայ տուէք տէ մոմ վառեցէք, հէմ ալ կը-նիկներնուդ խըյմէթը գիտցէք կէնէ, տուն երթալնուդ դէմերնիդ կեւան երկու չիֆթ լախըտը կընեն կոր, մերինը ատ ալ չընէր, հիմա երթալուս պէս նայէ ճէպս բալլինք ու-նիւմ, կը խոթեմ կը բանամ, ծառքովս կե-րակուրը տաքի կը դնեմ, կուտեմ, կը պառ-կիւմ, օղթալըսը կատու մը պիլէ չեմ տես-նար . . .

— Խապահաթը քուկդ է վրդանէս աղա, էրիկմարդ ես գտնուեր նէ ծանդ չի հանեմ . . . ինչո՞ւ համար չես խօսիր կոր . . .

— Ծանրմ խօսիս նէ ձգելուն պէս մօրը տունը կերթայ կոր, էյ ես ալ չար նաչար տուս կըլլամ կոր քի եռովաս չաւրուի տէ-յի . . .

— Ը՛նէ . . . պամպակ սէնտէ . . . հէլէ մէյմէկ հատ տահա խըմենք նայինք . . . ը-սելով կրկին կը ճնկեն, մինչ այն ատեն,

գիրնեան պատուհանին առջև դուրսը, գը-
լուխը չալ մը առած 10-12 տարեւ աղջիկ մը,
1-2 տարեկան պզտիկ մը դրկած պիշ պիշ
իրենց կը նայի:

— Նա՛, քուկինք Եկաւ Թորիկ աղա...

— Իշտէ չըսի, խալուզը տնկուեցաւ...
ինչ է ան քա՛...

— Տուտուս ըսաւ քի գալու ըլլայ նէ
չորս հատ իլիմոն առնէ պախալէն...

— Հա՛, իշտէ պու, հայտէ գնայ կուգամ
կոր... նա ինծի նայէ, սա ձուկը առ տէ
տար, Թող Թալան վրան դնէ ես ալ կը
հասնիմ...

Աղջիկը ներս կը մտնայ, մինչ գիրկի
պզտիկը անձանաչ վայրէն սոսկալով կսկսի
ճանկ ճանկ լալ ու պոռալ:

— Աղուր մէղէ Թորիկ աղա, աս ծա-
նուի ալ կը խմուի չիտակը...

— Մա՛խտուս կընես կոր քա՛, տա բիճը
դուրս հանէ, ինչ տէյի նետդ կը բերես կոր...

— Տուտուս ըսաւ քի, Թեւեթս փրթաւ
օրելով, մէյ մը հալած առնել տուր տէյի...

— Հիմա սուտուրիդ ալ կը պաշլայեմ
նինէիդ ալ...

— Պրոագ ճանրմ Թորիկ աղա, կէշ մը-
սեր չօճուխին, սէնինքի եօլամը...

— Էյ ինչ կըսէք սանքի, խօսք մէկով
ելլանք...

Գիրնեպանը լոյսերը մարած էր արդէն,
մէկ հատ մը կը պլպլար, և սպասաւորները
փեղկերը դոցած էին ալ, երբ երեքը մէկ
առաքանկները ձեռքերնին դուրս կելլային,
ամէն մէկը իր տան ճամբան գլտորելով:

Մենք հետեւինք Թորիկ աղայի, ակա-
նատես և լսողաց ըլլալու համար իր ընտա-
նեկան կեանքին:

— Բաթլամինչ եղար, հա՛... ինչ տէյի
չօճուխները Թախ մէխանան կը զրկես կոր,
եա ելլան վախնա՛ն նէ...

— Էյ Թորիկ աղա Թօհաֆ էս, մէյ մը
սահաթը նայեցար...

— Թոհաֆը նինէդ է... հոն չպիտի
մնայինք եա, Թող եաթախ եօղան ալ
զրկէիր...

— Քէպապը կուտեցաւ ալթըրի, Թամամ
չորս անգամ վրան գրի վար առի...

— Կուզես նէ տաանըչորս անգամ վրան
գրիդ գործերնիդ ինչ է, մեղի պէս տիօր
իրինկուն հէլաք չէք ըլլար կոր եա...

— Ա՛ս ինչ է, ամ վախիթ ծուկ ես ա-
ռեր նէ ե՛րբ Թալա ընեմ ե՛րբ պիտի ուտենք,
չօճուխին աչքերը կը դոցուի կոր...

— Երեսին ճուր դարկ, ատ բիճերուն
համար քէֆս հառամ չպիտի ընեմ եա...

— Հայտէ հայտէ, Թալան վրան դիր...

— Քա ճանրմ կերակուր ունինք հիմա,
Թորիկ աղա...

— Հայտէ կըսեմ կոր, հիմա՛...

— Զիֆի խըմես հէմէն ճիւնին հէրիֆ,
սե սահաթ է եղեր քի դէմդ կեցեր տէ պը-
սակուեր եմ...

— Ինծի առնելուդ Թող տէրտէրի իրիս-
կին ըլլալի քի օրը քսանը չորս սահաթ
դէմդ առնէիր տէ մորուքին Թէլերը համ-
բէիր...

— Քէչկէ անանկ ըլլար, էրիկ ըսածդ
սանկ իրիկունէ իրինկուն կուգայ, Սատուոյ
բարեւը կուտայ, զաւկըները կ'առնէ, սուֆ-
ուան կը նստի, քէֆ կընէ, աս ամէն իրին-
կուն կազի լուսով կուգաս, չախ չաղա-
նախ, քիւֆիւր...

— Լեւոնը ուր է, չեմ տեսնար կոր...

— Զօճուխը ճըղաց ճըղաց պառկեցաւ,
քիչ մըն ալ դուխը տաք էր...

— Հիշ մարութին ընել չիտէք քի, քիմ
պիլիր ո՞ր բօստալը եկաւ, լաֆաղանութեան
ինկաք, չօճուխը արեւներուն պարտեցաւ
հիւընացաւ...

— Անանկ է, հախ ունիս, քու ըրած հա-
րութիւնդ, տօղուսը...

— Զի հաւնեցար քա՛, ինչ, էլ բէշրէֆի՞
կուղես կոր զիշերով, հա՛, կոնակդ կը
քերուի կոր... սա նայիմ կրնա՛ս ըռախի-
ն ուռուֆը Թէփէս հաներ...

— Էյ ատ ծեծն ալ կերցուր տէ հիսապը
Թամամ ըլլայ, սէպէպ ըլլողը օռթերուն կեր
ըլլայ հէմէն ինչ ըսեմ քի, առտունները խու-
զի պէս դուրս կը հանեմ, իրիկունները ճա-
նալար կը զրկեն կոր քեզի...

— Տէ... շատ առաջ մերթար, զաթը
մահանայի կը նայիմ կոր...

Մինչ այդ և կին կը վիճաբանէին, պզտիկ
աղջիկը հօրը մօտենալով...

— Հայրիկ... Ինծի ինչ բերիր...

— Հայտէ անդին քա ճիւնոց, սա խը-
սիս առան... բապուճնիդ բերի...

— Աֆէրիմ հայրիկ, ինծի նոր բապուճ

է բերեր օխ եւ . . . քեզի չէ բերեր եւ . . .
ըսելով իր մեծ քրոջը կը դառնայ . . .

— Նա ետվառնեց քեզ են ելեր նիս-
պէթէն . . .

— Ամա հայրիկս ես ալ կուղեմ, կըսէ
քոյրը . . .

— Հայտէ անդին ճէճննէմ եղէք, հիմա
թէքմէիս տակը կառնեմ հա . . . կարգու-
ղին խելքը փսխեմ . . . պաշ պէլալարը . . .

— Ան առաջուրնէ մտմտայի տէ ինծի
ալ հայրը հայրը չէրէր . . .

— Վո՛ւյ . . . նաղենիմ . . . չիքեար
մաթան մընէի տէ էրեցար մրկեցար . . .
դուն չէի քի իլլէ կուղեմ տէյի, տաներէ-
ցիդ մօրուքը կղեցիր . . .

— Առած վախտս գիտնայի կլխուս դա-
լիքը նէ . . . մարապետ կըլլայի տահա . . .

— Գուղու՞մ հայրիկ, մայրիկս երբ տէր-
պապային մօրուքը կղեր է . . . ըսէ հայ-
րիկ . . . աղուոր հայրիկս ըսէ . . .

— Հոս եկուր քա՛ Գիւղնէն, դուն քովս
եկուր . . . հայրիկդ սարթմիչ է ըրեր,
ձեր անկաճներն ալ չաղտոտին . . . հոս ե-
կուր . . .

— Բուղում մայրիկս, տէրպապան դայ
նէ կէնէ մօրուքը կղէ տէ սէյի ընեմ . . .

— Կը հաւնիմ կոր սա խօրաթաներուդ,
նայէ չօճուխներուն առջին ըռէլի եղանք . . .

Մէկ կողմէն տիկնոջ պատասխանները,
միւս կողմէն պղտիկներու անվերջանալի
վզվզուկը ալ աւելի կը շոգիացնեն, ու ալ
Թորիկ աղա ըսուած ընտանիքի հայրը կա-
տարեալ վագրի մը կը փոխուի :

— Բա ինծի նայէ ինծի, մազերէդ բըռ-
նելուս պէս մէյտան սիւփիւրկէսի պէս սիւ-
րիւքէմիչ կընեմ քեզ, նիսպէթ կընես կոր
ինծի . . .

— Ասա զէ՛նի զըխմա՛ ըռախին հոգս չէ,
ղաւկընեքուդ արունն ալ կը խըմես կոր, աս
ամէն գիշեր քիւֆիւրէն պաշխա բան մը
լսած չուին բերնէտ մախսըմները . . .

— Կը ծեծեմ Բրաբ . . . օսկոռներդ կը
կոտորեմ, ըսեմ քեզի, քա դուն իմ խմա-
ծիս ի՞նչ կը խառնուիս կոր, ճէճէլիդ սըն-
տուկին օսկիներովը չեմ խմեր կոր եւ . . .
չօգ չէյ, պալըխն պիլէ կը կարգուի կոր
նէ, քսան եռսուն օսկի դրախտմա կառնէ
կոր, փառք Աստուծոյ, մինք անոր խըտար

ալ չեղանք, տասնը վեց տարի է թաշնի
պէկիրի պէս կը կըրեմ կոր . . .

— Ես ալ տասնըվեց տարի է, զաւակ-
ներուդ տատառութիւն կընեմ կոր, պէսլէմէ
մը բռնէիր նէ մինչեւ հիմա քիւլ եղած էիր,
պերանս պացած տէ բան մը բսած ունիմ . . .

— Նէ իսէ, կընիկ, սըտեղէն թէք մը
ըռախի տուր տէ պարըչինք, իշտէ յօգնած
մարդ եմ ճաննմ . . . հօշ կէօրիւվէր դա-
ռը . . .

— Տամլան չեմ ի տար, աչքերդ նայէ
ճամլի պէս կը վառին կոր, մէքմը այնան նայէ
տէ ետքը . . . հէմ ծառքի ծուկս ալ եղաւ
իշտէ, հայտէ չօճուխները առ տէ սուֆուան
նըստեցէք, ես ալ կ'ուզամ կոր . . .

— Ծանրմ հիմա չօճուխները ձգէ, դուն
ինծի խատէիս մը տուր, կէնէ չաւրուինք . . .

— Զեմ ի տար, մեղնիլօ գիտնամ նէ
չեմ ի տար . . .

— Ամա ես կըսեմ կընիկ . . .

— Սատկիլս գիտնամ նէ չպիտի տամ . . .

— Կընիկ կը քերուիմ կոր, ծառքէս խա-
ղա մը պիտի ելլայ . . .

— Պիտի մեռցունես տահա . . . չօճու-
խերդ մեխկըցիր, ինծի համար հոգս չէ . . .

— Բրաբ ոտքս ծառքս կը դողայ կոր,
աչքէս ալէֆ կեկլայ կոր . . .

— Աման Աստուած իմ, դուն հոգիս առ
տէ ազատիմ աս ճանաւարին ծառքէն . . .
իշտէ չպիտի տամ կըսեմ կոր . . .

— Կընիկ տուր կըսեմ կոր ես ալ . . .

Թորիկ աղա տեսնելով որ կինը կը յամա-
ռի և չուղեր տալ օղին, կայծակի պէս վը-
րան կը նետուի ու կսկսի տիկն . . .

— Ա՛յ . . . վա՛յ . . . ամա՛ն . . .

— Իմ խօսքս պիտի ըլլայ, եռումուռճախ
սուռաթլը ճատը . . . ըռախիս . . . չաթ . . .

— Աման մարիկ . . . առըղներօ . . .

— Մայրիկ . . .

Պղտիկները կսկսին լալ ու պողտալ,
Թորիկ աղա դիւահարի մը պէս կը շարու-
նակէ իր վայրագ ծեծը խեղճ կնոջը, մինչ
երեք զաւակները իրենց հայրիկին հոգեբուն
պըլլուած արգիլել կուղեն, ազատել իրենց
մայրը անզուսպ գիտնովին վայրագ ճիրան-
ներէն :

— Անդին . . . քիճեր մը ձեզի, հիմա
կը խըխտեմ հա՛ . . .

— Գուգու՜մ հարիկ , մայրիկը մեղք է . . .

— Սո՛ւս . . . չան ձգնած , մեղք մի՛ . . .
Խնձի մեղքը չէ , խառնել մը ըռախի է ասի-
կայ , պապային առնը չուղեցի ես՝ . . .

— Երկու բուռդ վաղէ տէ աշխարհք ղըն-
տան պեանաս , խաղէպ մարդ . . .

— Տահա՛ տահա՛ , սա նայէ . . . չա՛թ . . .
բա՛թ . . . քիւ՛թ . . .

— Հայրիկ , մայրիկիս պերնէն արուն
կուգայ կոր . . . մայրիկ . . .

Նոյն ատեն , Թորիկ աղա , ոտքերուն
պըլլուած չորս տարեկան զաւակին թնէն
բռնելով՝ ափսոս մը դուրսի բակը քարե-
բուն վրայ կը նետէ որ , պղտիկին ոչ ձայնը
կեղայ ոչ շունչը :

— Բա զաւակս , եա՛քում , մեռցուցիր
զաւակս . . . Էօժէնի՛ . . . չորնամ : Բար
մաղբը ցիր ու ցան ու բերանը արէն լուայ
զաւակին կը մօտենայ ու հաղիւ արցունքոտ
աչքերով վեր առնել կուգէ իր սրտին հա-
տորը , կը տեսնայ որ սրունքը իր բնական
վիճակէն նեղու , կոտրած ու կախուած է
մէկ կողմ . . .

— Է՛յ . . . ճանաւա՛ր . . . չօճոխս ոտ-
քը կոտրեր ես . . . չօճոխս . . . եա՛վրուս . . .

— Պօչ լախըստը , հէմէն ալ կոտրեցաւ ,
կը մուտայ Թորիկ աղա , այս վաշտանունէն
քիչ մը պթափած , տահա նէլէր . . .

— Դա նա՛ իշտէ , օսկոռը երկուք է ե-
ղե՛ր . . . չօրնայ ծառքդ . . .

— Տաք տաք քան մը փաթթէ , խոփի
պէս խայնամիշ կըլլայ . . .

Պղտիկը , յանկարծակի մարմուռքէն ըս-
թափելով , ե կոտրած տեղը պաղելով կսկսի
ծչել . . .

— Ուրբ՛ս . . . մայրիկ ոտք՛ս . . .

Այս անակնկալ աղմուկէն , որ սովորա-
կանէն քիչ մը չատ էր , այդ գիշերը , դը-
րացիները կը հասնին ու սենեկին մէջ բաղ-
մութիւնը կը լեցուի . . . աղան ձայնն հա-
սածին չափ կը պօռայ աղատուու համար
աշխատած ատեն , խեղճ մայրը ստացած
հարուածներէն կը տքայ աղեկը գէթկը ա-
ռած , մինչ միւս պղտիկները մուկ կոտրած
մէկ մէկ անկիւն մշիկ մշիկ կ'արտասուէին ,
սոսկում վիճակի մէջ :

— Մեղա՛յ . . . խուռտուխաչ է եղեր
մախսըմը . . . խօսք կ'առնէ դրացնուհի մը :

— Բիւթին խմելուն նէթիճէներն են իշ-
տէ , զիթթ խըմես տէ չի հասնիս ըլլալու ,
կը ձայնէ ուրիշ կին մը . . .

— Պէ պապամ , մենք ալ կը խմենք
ամա , բիւթին բիւթինէն էսիրը չենք ըլլար
աս խառնախտին , սա նայէ , չօճոխին ոտքը
սախաթ պիտի մնայ . . . կըսէ դրացի մարդ
մը :

— Ճանաւար ըլլայ նէ , զաւակը լզելով
կըռքնթցունէ , սա նայէ , հի՛ . . . աս աչ-
րէճէն ալ չէի տեսեր . . .

— Թորիկ աղա , հաւենցա՛ր ըրածիդ ,
հայտէ մի կենար տէ զնայ խըռքիճի մը բեր
պարէ . . .

Թորիկ աղա շուարած ու խեղացնոր կօ-
շիկները կը հանէ ու փողոց կիյնայ , ու քիչ
վերջը խըռքիճին կը հասնի :

— Ի՛նչ եղաւ , ո՛ր է չօճուխը . . .

— Նա եա՛վրում , մօրը կիրկն է , ա՛վաղ
ա՛վաղ կը պօռայ կոր , մէյ մը նայէ . . .

— Էյ ինտո՛ր եղաւ , վէրտիվէնէ՛ն ինկաւ ,
ինչ եղաւ . . .

— Քէշկէ անանկ ըլլար , խաղա է կըսէ-
ինք , հի՛չ , ի՛նչ պիտի ըլլայ , հարը խըմեր
խըմեր եկիր սարխընթըռթին է սուեր կըն-
կանը , չօճոխն ալ ոտքին տակը եկեր է նէ՛ ,
թե՛ կն պռնելուն պէս ա՛վրուն է նետէր . . .

— Չօգ չէ՛յ . . . աս զաւակը չրաման-
քինդ չէ՞ Թորիկ աղա . . .

—

— Ճանրմ ինչո՛ւ ատտար խայրնճաւնա
կը խըմէք , չիյտե՛մ քի . . . պերէք նայիմ
չօճուխը , ըսելով , կը քննէ , կը զննէ ու
սիրտհաշուք ցաւերու պոռչտուքներու մէջ
կը կապէ ոտը , աւելցնելով թէ՛ չատ գէշ
տեղէ մը կոտրած ըլլալուն , ոտքը չորս մատ
կարճ պիտի մնայ . . .

Դրացիները , արդար անէճքներով կը
մկնին առնէն , մայրը մինչև լոյս տողուն
աղիողորմ ճիշկուուն քաւերուն մտաւ
հակէ , մինչ Թորիկ աղա , զատ սենեկի մը
մէջ 1 1/2 բաքէթ ծիտախոտ կը վառնէ , բրա-
ծին վրայ դրջացած ձեւով մը :


×

Այդ աղջիկը վաղը պիտի մեծնայ, և իր հասուն հասակին մէջ ամուսնանալ պիտի ուզէ, իր ձեռքը խնդրողները, կաղութիւնը պիտի առարկեն և խեղճ գոհը, որ ալքոլամոլութեան կենդանի օրինակն է, տունը պիտի մնայ, անիծելով իր հայրը, որ թեւեւ այն ժամանակ մեռած պիտի ըլլայ, իսկ եթէ ոչ չ մնայ, այդ ցաւաքար աղջիկը ամէն վայրկեան երեսին պիտի տայ այն տխուր իրականութիւնը, և հայրը իր կարգին ոչխարի պէս լուռ ու գլխիկորարցունքով պիտի ունկնդրէ այդ բողոքագիրը, առանց համարձակութիւն ունենալու լսեցնել իր աղջիկը և կամ յանդիմանել:

X

Ալքոլամոլութեան դէմ գրելու համար, երկու յառկութիւններ ունենալու է մարդ, կամ բժիշկ ըլլալու է, մարդուս ֆիզիքականին վրայ ըրած չար ազդեցութիւնը ձաղկելու համար, և կամ մութ խաւերուն մօտէն գիտակ ապրած մէկը ըլլալու է, ճշգրիտ պատկերը գծելու համար անոր, այսինքն ալքոլամոլութենէն քայքայուած ընտանեկան բոյները գծելու համար:

Ա. ՓԱՓԱՋԵԱՆ



ՏԱՊԱՆԱԳԻՐ

Լո՛ւ՜ն տպագիրս ներքեւ հանգչի
Բաճաւեայ մի պատանի,
Նա ծնունդն էր, ուսման կեանքին,
Յոյսն էր, ժրպիտը ծրնողին:

Տխու՛ր էր անհալաւագորով
Դեմքն ժպտիտ զո՛ւրկ օրհորով
Գեղեցկութեան էր սիրահար
Տա՛ւ արցունք հոսէր աչքն վար:

Ազնիւ սիւս մը սիրեց Անի
Բացուած սիրուն, վարդի նրման,
Ինչո՛ւ ծըլած ծաղիկն սակայն,
Ունեցաւ կարճ կեանք մը այդքան:

Մինչ աչքեր ծագէր արտօն
— Տըխու՛ր լիւում էր սիրելոյն,
Կաղաղ փրչեց նա ծունցն ցեղին
Յաւերն ու վիթս բողով ետին...

Զ. ԲԱՐԱՂԱՄԵԱՆ

ՅԱԿԱԿՆՈՏ ՊԱՐՈՆՆԵՐ

Բնդհանրապէս ցաւօք կը տեսնուի թէ՛ երէկուան սկանալ պարոնները այսօր իրենց շուրջլիններուն և նոյն իսկ ուսուցիչներուն չհաւանելով ինքիզինքնին ամենաբարձր, իտեալ էակ մը կը դաւանին, ու միշտ ամէն բանի մէջ անճանազանութիւնն իրենց է՛ն մեծ առաւելութիւնն ըրած են, որուն շատ անգամ կը միայնեն յոխորտալից շարժումն մը, որ երբեմն իր ծայրայեղութեամբն դժբաղդաբար, հակահարգկային ըլլալէ երբեք չ'դադրիր:

Այսպիսի պարոններու թիւը այժմու հրապարակին վրայ խիստ շատ է, որոնք իրենց ճղճիմ պաշարով բանդէտի հովեր առած, յաճախ իրենց խօսակցութեան ամենէն կարեւոր տեղն անճանազանութեամբ կը լեցընեն, որով կը փութան հանրութեան առջև համայնագէտներ երեւնալ ու անոնց համարումը չահելով համբաւ մը չինել, սակայն դժբաղդաբար, իրենց յաւակնոտութեան, պարծենկոտութեան շնորհիւ համայնքին արհամարհանաց արժանանալով, իբրեւ մէյմէկ իմաստակներ կ'արդահատուին, վասն զի, պարծենկոտութիւնը կամ ցուցամոլութիւնը տկար միտքերու գործն ըլլալով, պարծենկոտ մարդը միշտ իր ունկնդրաց արգահատական ծիծաղը կը չարժէ, և յաճախ մարդկութեան զղուելի լինելով, անոնց թշնամ մական նախնանքն առ ինքն իրաւ իրէ:

Իրենց ետին վրայ մեծ համարում ունեցող անձինք ինքիզինքնին չ'ճանչցող մոլորներ են, և ինչպէս թռչուններուն տկարութեան են որ սովորաբար ամենաբարձրերը կը թռչին, այնպէս ալ մարդոց ամենատկարամիտներն են որ իրենց երեւակայութիւնը դէպ ի բարձրերը սեւեռելով ինքզինքնին ամէն կատարելութիւններով օժտուած կը համարին, ու միշտ հանրութեան առաջ բարձր դրուատիքներով անձկրնին կը գովեն, ի փոխարեն՝ ձրի համարում մը ակնկալելով Սակայն, ի դո՛ւր, այդպիսին միմիայն արհամարհանք մը կրնայ շահիլ, վասն զի անպառ շաղակրատ մարդը պարապութեան մէջ խիստ շատ շառաւիւռն հանող անամէջ զըլ-

ստորուն տակաւի մը կը նմանի, որ միշտ ձանձրոյթ ու զլխացաւ կը պատճառէ:

Կան նաեւ այն տեսակ յաւակնոտ պարոններ, որոնք՝ սրնոյն կառքի մը անիւին վրայ կիցած, ու անոր հանած աղմուկն ու փոշին իրեն վերագրելով պարծենցող ձանձին նման՝ հանճարեղ միտքերու արտադրութիւնները իւրացնելով գիտնականի հովեր կ'առնուն, միշտ աւանց նկատի առնելով թէ՛ իրենց այդ ընթացքով միայն անմիտներու գնահատումը պիտի կրնան վայելել: Աւելի լաւ է ճշմարիտ կարողութեան մը արժանանալու աշխատել, քան թէ օտար արտադրութիւններով փառք չահելու ջանալ: Եւ, եթէ երբէք այս վերջին դրութիւնը իրենց սովորութիւն ընող անձինք յաջողին կեղծ համաւ մը վաստակել, քնաւ անոր վստահելու չ'են:

Մարդս՝ որքան ալ արժանիք ու կարողութիւն ունենայ, երբէք անոնցով պարծենալու չ'է, վասն զի պէտք է գիտնալ թէ իր ունեցածներուն մեծ մասը ուրիշներէն ընդունած է և պարծանքը՝ միայն տկարամիտներուն զարմանաց կ'արժանանայ: Առաւելութիւններով օժտուած մարդը՝ որչափ որ յարգելի ու մեծարելի է, այնքան գերյարգելի ու կրկին մեծարելի է, այն մարդը՝ որ ստուգիւ իր առաւելութիւններուն տէրն է, ու զանոնք խոնարհաբար ծածկելով պարծանքէ կը խրտի, արդարեւ այդպիսի անձինք գովասանքի արժանի են, ինչու որ աշխարհի վրայ պարկեշտութենէ խոնարհամտութենէ աւելի մեծ առաւելութիւն չ'կայ: Այն յաւակնոտ անափառ պարոնը՝ որ համալաւ չահելու յուսով իր ամենայնիւն ու անարժան մէկ գործին վրայ գովասանքով կը պարծենայ, ինքնին իր բաղձացած փառքը կը հալածէ, վասն զի քանի որ վրայ պարծենալը զայն նսեմացնել և ծիծաղելի ընել է: Փառքի արժանանալ ուղղները՝ յաւակնոտութեան տեղ՝ պէտք է մեծ մարդու պէս գործեն և անոր վրայ խօսիլն ու զարմանալն ուրիշներուն թողուն, որովհետեւ, հեղինակի մը իր ձեռնարկին վրած ըրած գովասանքներն՝ անոր արժանիքը կը նուազեցնեն:

Յաւակնոտ անափառներէն ոմանք՝ երբեմն այն աստիճան իրենց մոլութեան գերին կըլլան որ՝ փառամոլութիւններնուն յազուրդ տալու համար, շատ անգամ մինչեւ իսկ կը յանդգնին իրենց ընկերներուն անիրաւութիւններ գործել:

Յաւակնոտ անափառութիւնը՝ մարդկութեան համար միշտ աղէտ մ'է և զայն դէպի անկում տանելէ դատ, ուրիշ ոչինչ ունի օգտակարութիւն. ուրիմն յաւակնոտ պարոններու և կամ յաւակնոտութեան յարեւմտադիրներուն կը յանձնարարեմ յիշել Սոլդատն իմաստունի սա խօսքը, թէ՛ «Որդի՛ք մարդկան մինչեւ յ'էրբը ընթանաք զհետ ստուրբեան եւ սնափառութեան»:

ՆԵՐՍԷՍ ԶԱՐԱՐԵԱՆ

ԶԻՖԹԵԼԻԿԻ ՊԱՐՏԵԶԸ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԶԲՕՍԱՐԱՆ

Սկիւսարի զբօսասէր արգոյ հասարակութեան փափաք լիով կ'աջատրելու յուսով, յիշեալ պարտքը այս տարի անմիջեւ վիճակի մը վերածուած է պէտքէ բռնել:

Նմանը չի գտնուած դիրք, ծառերու հովանին, սպասարկութեան անժխտելի փութկոտութիւնը, եւ ինքնա մաքրութիւնը անգամ մը եւս կ'ապացուցանեն քեւ, սոյն պարտքը մէկ հասիկն է բովանդակ Սկիւսարի մէջ:

Ժողովրդեան խնդրանքին վրայ այս անգամ Արեւելեան նուագաձուաց՝ Պոլսոյ մէջ գտնուած խումբերէն հասիկ հասիկ զատելով եւ գտելով խումբ մը կազմուած է, այսինքն՝ Բաղրամի Զաքիի, շալուքաճի Խալսո, ուսի Խալափի, հանեհեհ Զանի Կարապետ, Յովսէփ, Բաղրամի Զալի եւ Բաղրամի Բաղրամի Կարապետ, որոնք Ուրբաք, Շաքաք եւ Կիրակի երեկոյները պիտի նուագեն սոյն պարտքին մէջ:

Եւ որպէս զի արգոյ հասարակութիւնը Կիրակի առաւօսներն ալ չի զրկուի իր հանդիպի զբօսանքէն, նոյն խումբը Կիրակի առաւօսներն ալ պիտի նուագէ բմպիլներու եւ աղանդներու կես գինով:

Կանխատեսուած տնօրինութեամբ, որպէս զի ժողովրդը ամէն կերպով զոն մնայ, մասնաւորապէս զինքնը նշանակուած բուրքեր, եւ ապաւանքները նշանակելի բլրիկներ ալ պատրաստուած են, որոնցով հանրութիւնը պիտի կրնայ իր ապաւանքն աչի դէմ ունենալ, այսպէսով արգիլելու համար սպասարկութեան ինչ ինչ զեղծումներ:

Ընտանեօք պատուաւոր ժամանց մը փափաղները կրնան վստահաբար դիմել Զիֆթիկ, ուր պիտի գտնեն ամէն նաշակի յարմար եւ դիւրամասշտի զբօսանք մը շաքրուսն երեք օրերուն մէջ:

ՅՈՒԾԱՏԵՏՐԻՍ ԷԶԵՐԵՆ

(Յ Ա Ն Թ Է Զ Ի)

ՆՐԿԱՆՈՒՄ

Այս կիրակիները անտանելի դարձան :

Հակառակ նախախնամութեան տուած պատուէրին՝ որ կըսէ « վեց օր աշխատիլ եօթներորդ օրը հանգստանալ » մենք իւր պարտաճանաչ քրիստոնեայ վեց օր կ'աշխատինք , եօթներորդ օրը կրկնապատիկ քառապատիկ աշխատելու համար :

Դիտեցէք , մեր ֆիզիքականը , այսինքն մարմնինս կիրակիին է որ արիւն քրտինքը կը մտնայ կը յոգնի , կը թուլնայ և կը սեղմուի այնպիսի սեղմ հագուստներու դարձերու մէջ , որուն նմանք երբեք չի կրեր շաբթուան միւս օրերուն մէջ :

Նիւթապէս ալ անանկ , կարծես վեց օր կ'աշխատինք կիրակիին մէջ ուտելու , մըստ խելու , վառնելու համար : Ծարթուան պարզ օրերուն մեր աշխատութիւնէն , գործէն դարձին շունչերնս տունը կառնենք մեր ընտանիքին մօտ , և ասոր համար հինգնոց մը չենք վառներ : Դաշխուղ կը մագլցինք զառիւթները , շոգենաւին մէջ խազանին մօտը կը նստինք մեկօրի տուգանք չի տալու համար , կը վաղենք , կը յոգնինք , որպէս զի գրպաննուս ո' ք է գրամ մը չի մտնէ , մինչդեռ կիրակիին մէջ , կառքերու մէջ կուգանք բազմիւր , և կառքին ալ աղէկը կը կատենք , հինգնոց մը բուռ պուառ կուտանք կառադանին , կէս ժամ ևս սպասելուն համար զբօսարանին առջև , ուր կը մտնանք չիչը հինգ զրուշ գարեջուր խմելու , առանց մտաբերելու թէ՛ նոյն չիչը և աւելի թարմը տանը մէջ ուրիշ օրեր քառասուն փարայի կրնայ խմուիլ : Եւ դեռ նմանօրինակ շատ մը բացառիկ ծախքեր , որոնք կրնանք կըլլանք առանց արտնջալու , լոկ յարգելու համար սա մեծ խօսքը թէ՛ « վեց օր աշխատէ , եօթներորդ օրը . . . կեր » , բարոյական տեսակէտով ալ նոյնը պէտք է ըսել , շաբթու մէջ զբաղմանց չնորհիւ ժամանակ չենք ունենար անով ասով զբաղիլ , վեց օր կը համբերենք և եօթներորդ օրը ,

կիրակիին , ամբողջ շոգնիս դուրս կուտանք : Կիրակիին է որ կը նստինք պատուհանին առջև և անցնող դարձողներու վրայ կը թափենք մեր չափաւոր դիտողութիւնները , բամբասանքը , վայրահաշութիւնը :

Վերջապէս սա կիրակիները անտանելի են ամէն անոնց համար , որոնք իրենց վեց օրուան աշխատութիւնէն վերջ մէկ օր հանգիստ կը փնտռեն , և սակայն չեն գտներ :

ՆՐԵՔՆԱԳԻՐ

Դպրոցական հանդէսներն ալ օրուան նորոյթները դարձան :

Դիտեցէք , ամէն կիրակի հանդէս մը կայ ներկայ ամսոյ մէջ , հոս հոն , ուր որ կուգէք :

Դիտէ՛ք , դպրոցական հանդէս ինչ քանի է : Բացառեմ , Ընդարձակ սրահ մը , և կամ պարտէզ մը չքեղապէս զարդարուն , կարգաւ ավանդներ դիրկ դիրկի վրայ , բարձրադիր բեմ մը , դանգակ մը , 40-50 ասկեղծ գիրք և 200 թօնօ քրտինք : Մեր իգական սեռը արականէն աւելի հոգի կուտայ զըզրոցական հանդէսի մը ներկայ գտնուելու համար : Ինչո՞ւն , չեմ գիտեր , սակայն ճշմարտութիւնը սա է որ ո' ք է կրթական հանդէս կրնանք և օրիորդներու համար կը սարքուի դոգմէս , այնքան նախանձախնդիր կըլլան անոնք :

Նրեւակայեցէք ճառք զլիարկներու մը թերանոց մը , լայնկզր , բարձր , դուռագեղ , կառքի մը անիւին չափ ընդարձակածաւալ : Բուտոյաբանութեան քննիչը , բոլորն ալ քսուած քսուքուտուած , ճերմակ , ուօզ , որը որ կուգէք , ծեփուած մալակոնուած դէմքեր , որոնց վրայ քրտինքի կայլակներ ակօսներ կը բռնան : Դոյնզգոյն թուալէթներ , պղուզներ , պօլեոօններ , բոլորն ալ այս տարուան նուազութիւն , որոնց թեւերուն տակէն անուշ անուշ բուրով քրտինքի հոտը , գերազանցելով էքսթենսիւններու բուրումը՝ անտանելի կը դարձնէ ճնշուած միջնորդը :

Չեմ գիտեր թէ մեր գեղեցիկ սեռը , որ այսքան տաք վերարերում մը ունի դպրոցական հանդէսներու համար , ինչ կը հասկընայ մէկ երկու ժամ արեւին կամ սրահին տաք ցեղունին տակ նեղուելով :

Իրաւունք չունիմ թէ և արգիւելու զիրենք կրթական այս գեղեցիկ հանդէսներէն ,

բա՛յց . . . բա՛յց . . . բա՛յց . . . բա՛յց . . .
իրաւունք չունիմ զրկելու զիրենք... բա՛յց...
բա՛յց . . . բա՛յց . . . կը քաշուիմ, բայց պի-
տի ըսեմ . . . բա՛յց . . . բա՛յց . . . զոնէ
գիտնան սա բացարձակ ճշմարտութիւնը թէ՛
կրթական հանդէսները աղջիկտեսի սալօն-
ներ չեն, ոչ ալ տէքօլթէի ցուցադրութեան
էքքօզիսիօններ :

Այքերս չատ բան տեսան այս տարի նը-
մանօրինակ կրթական վայրերու մէջ, և ա-
նոր համար նիւթ կառնեմ այս պարագան :

Դպրոցը և անոր նուիրական յարկը օլտուճ
խնայենք մեր քմահաճոյքներէն :

Զորեքշաբթի

— Ի՞նչ է ակնոցը .

— Օրիորդներու և թէ կարգ մը միւ-
սիւններու գէմքին ուղղութիւն տուող գոր-
ծիք :

— Կիները ինչո՞ւ կը համաձուլն .

— Ոսկիով և կամ՝ ծեծով : (Այս վերջի-
նը պարիթ եղած է հիմա) :

— Արդի օրիորդներուն՝ երիտասարդնե-
րու վրայ փնտռած առաւելութիւնն ի՞նչ է .

— Մէքսէմութիւն :

— Օրիորդ մը ո՞ր ատեն կսկսի ամուս-
նութեան գաղափարը քնուցանել իր մէջը .

— Այն ատենէն երբ երեկոյթի մը մէջ
տիտիկ ընել չեն ի տար տանսի համար :

— Կին մը երբ ինքզինքէն կը պաղի ու
կը ձգէ թուալէթը .

— Երբ թողը ամուսնացնէ, և սա ալ
զաւակ մը ծնի :

— Օրուան ամուսնացողներուն մէջ վէճը
ո՞ր ատեն կսկսի մեր համայնքին մէջ :

— Երբ դրամօժիտը ջուրը քաշէ և կամ
ձէնէզին հագուստները հիննալով նորեր չի-
նելու խնդիրը մէջտեղ ելլայ :

— Որո՞նք աւելի դրամ կը վատնեն ամ-
րան կիրակիները զքօսավայրերու մէջ .

— Շարաթականծիները :

— Մեր Հայ-յայն դասակարգին է՛ն սիրտ
հատնում և կամ տէրտ ընելիք ընտանեկան
պարագան ո՞րն է .

— Խոհարարին, բառամանային հետ ու-
նեցած յարաբերութիւնը :

— Բժշկութեան մէջ ո՞ր բանը կը պակսի
և որ մինչև հիմա գաղտնիք մըն է մեծ գի-
տութեան համար .

— Քառասուն փարայ ցնծալով « Հանրա-
գիտակ » մը գնել, կարգալ և բուժուիլ :

Հինգշաբթի

Ամառնամուտէն ի վեր ամէն օր նոր բան
մը կը նշմարուի մեր հօբպիլիպիմպօմ օրի-
որդներու վրայ :

Այս տարի ցութ ձերմակ քօսթիւմներուն
հետ, գաւազանակրութիւնն ալ՝ մօտաւ ե-
ղաւ :

Գաւազանի հնարքը, առաջ՝ իբր ծերե-
րու յենարան կը գործածուէր, վերջէն մեր
միւսիւնները իրենց մատներնուն մէջ գարձը-
նելու հաւկթութիւնը ըրին, և հիմա, օրի-
որդները սկսան գործածել :

Շիտակը խօսելու համար ճամբան վախով
սկսած եմ քալել, մանաւանդ Բերայի, Գո-
տը-գիւղի պէս բարակցած վայրերը, որպէսզի
մի գուցէ գլխուս ուտեմ այն հարուածը, զոր
տղայութեանս անգամ չեմ կերած վարժա-
պետէս :

Քիչ մը քիչ տգեղ բան չէ կարծեմ, տես-
նել Մաթուս աղաներու պէս մարդոց աղ-
ջիկներ, որոնց ձեռքը սոխ ստրկելէն շախ-
մէ՛մ շախմէ՛մ եկած է, և որոնք իբր նու՛վօ-
թէ գաւազան կը գործածեն :

Ականջովս լսեցի սա խօսակցութիւնը
փողոցին մէջ .

— Աղջիկ, ամօթ է, ախքօրդ տուր
պաստօնը, կըսէր մայր մը, որ պիտէ գըլ-
խարկը ձօճելով, ձերմակ պատանքուած օ-
րիորդին ետեւէն կը քալէր :

— Ո՛ւՖ . . . դուն ի՞նչ կը հասկնաս . . .
քեզի՞ ինչ կըլլայ կոր . . .

— Քա նասըլ ի՞նչ կըլլայ կոր, դուն է-
րիկմարդ ես . . .

— Հիմա մօտայ է, չե՛ս հասկնար . . .

— Քա եավրում, սիւլիւնի պէս պօյ ու-
նիս, հիմա պիտի ըսեն քի, սախաթ է տէ
պաստօնին տայանիչ կըլլայ կոր . . .

— Ես գետինը չեմ դպցըներ կոր նայէ . . .
ըսելով ձեռքին մէջ կը դարձընէ բարակ
գաւազանը . . .

— Ո՛ւՖ . . . կոտորտի ծառքդ, շան
ձգնած . . . աչքս պիտի հանէիր . . .

Ու ըսել թէ՛ բան մը չկայ որ չի կապ-
կենք թուալէթի մասին եւրոպականէն, բայց
այդ օրիորդին պէս ձախաւեղներ մօրերնուն
աչքը կը հանեն . . .

Ուրբաթ

Անցեալ երեկոյ Վոսփորի շոգենաւին մէջ իբր ճամբորդութեան պօշադազուքին կամ լաքլաքի, մէկ քանի գրականութիւնը սիրող բարեկամներ իրարու կը հարցնէին թէ, ինչո՞ւ մեր հին գրագէտները և կամ յօդուածագիրները չեն գրեր, և հրապարակը կը ձգեն եմգիկցու պլանպէքներու, ու մենք կը զրկուինք իրենց չինիզ գրութիւններէն:

Ես որ ճակատահովին տուած շոգենաւին ճեղքած ջուրին և անոր ճերմակ փրփուրներուն կը նայէի, գրականութեան վրայ դարցող խօսակցութենէն ցնցուած, ետիս դարձայ թէ՛ որո՞նք էին այդ արդար դիտողութիւնները տեղացողները:

Երեք արհեստաւորներ, մատերնուն կոշտերը վկայ, իրենց օրուան աշխատութենէն յոգնած, բերանին լարած հովին, գրականութիւնը կը ձեռնէին:

— Ախպար, ան ուր է Աւետիք պատուելին կար դիտո՞ւ, մարդը զրիչ կը բռնէր լաքի չէ, կըսեր մին:

— Սալթ անիկոյ, հապա տիրացու Նարինը, ան ի՞նչ աղուոր լեզու մը ունէր քի, կարդացողն ալ լան մը կը հասկընար զրուածքէն, խօսք առաւ միւսը:

— Հապա Տիմոթէոս վարդապետը... անոր պէս յօդուած պոռնող մը եկա՞ծ է ա՛նպա... ըսաւ երրորդը:

Հասկըցայ...

Պահ մը ինքզինքս փոխանակ Վոսփորի Էէթիին, Նոյի տապանին մէջ կարծեցի: Այս մարդիկը հիներէն կը ճառէին, այնքան հիներէն, որոնց անունը թերեւս պատմութեան էջերուն մէջէն ալ ելաբօռե եղած է, այսօր, Աւետիք պատուելի, Տիրացու Նարին, Թոռոս վարժապետ, Էւալլն, որոնք ո՛վ գիտէ ինչպիսի մանկանացուներ էին այն ատեն: Եւ ատենք զարմանալի է որ բաղդատութեան կը դրուին օրուան չօճուխներուն հետ, որոնց բերանը կաթի կը հոտի դեռ:

Եթէ անկրթութիւն չըլլար ընելիքս, պիտի համարձակէի ըսել իրենց թէ, այս տարի բաթլիճան սիֆիթան բրին, Զերքըրին թէ Բեստանէին ջուրը թեթեւ է, և կամ քէօմիւրը քանի՞ կը կշռեն կոր...

Հաւատացէ՛ք թէ գրականութեան մասին դիտողութիւն ընողները բնորոն ալ այս կարգէն են, ինքնակոչ պուէտներ, որոնց մօտ բան մը չի պակսիր, բացի... Ռեռալիօն:

Շաբաթ

Իմ մասին տարեկան մը «Հանրագիտակ» նուէր կուտամ այն օրիորդին, որ համարձակի բերանը բանալ աչքերուս առջև, և համոզէ զիս թէ՛ կեղծ ակոյայ մը և կամ լեցուցած մը չունի:

Զարմանալի նորոյթ մընալ կեղծ ակոյաները եղան երկու երեք տարիէ ի վեր, չեմ գիտեր թէ, ակոյաներու առողջութեան հարկ անհրաժեշտ ըլլալը գիտնալով, համոզուելով է թէ՛ լոկ ցոյցի համար...

Օրիորդներ գիտեմ, որոնք կանգուններով կը լարեն բերանին խնդացած աստիճանին, որպէս զի ետեւի կամ առջեւի լեցուած ոսկիները փալփին... Աս ալ իրենց լիւքսը:

Հիմա այս տարի, կրնամ ըսել թէ կարեւոր տանքիսները գլուխ քերելու ժամանակ չունին, իրենց սալօնները լեցուն են մանկամարդ և նորաբողջ օրիորդներով, որոնք կարգաւ, թռչնաձագերու պէս կը սուցին կը բանան լմիչկին Ֆօրեօյին վրայ, որպէս զի իրենց ակոյաները փալփին չողուն:

Խեղճ ու կրակ ծնողքներ, դեռ ինչե՞ր պիտի քաշէք մօտաի երեսէն:

Կեսուրներու միակ խրատականս սա է որչեթէ իրենց տղուն աղջիկ մը աւնել ուղեն, առաջին անգամ ակոյաները նային... ոչ թէ տարիքին հասկընալու, այլ խաճած տեղերին մօտ մօտ չընելու համար:

Կիրակի

— Լաւ է մութին մէջ թշնամիի մը հանգիստիլ քան թէ օրուան լուսուն՝ կնոջ մը:

— Կինը աչքէն կը բռնուի, իսկ այրին սիրտէն:

Վ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ

PROFESSEUR ANGEL

Վկայեալ Բարիզի եւ Պեդիքի

համալսարաններէն

Ամէն անոնք, որոնք կուզեն քիչ ժամանակուան մէջ, խիստ դիւրամտութեամբ պայմաններով հիմնովին սովորիլ Գերմաներէն լեզուն՝ ինչպէս նաեւ Ֆրանսերէնը

ԱՌԱՋԻՆ ԱՌԹԻՒՒ

պէտք է դիմեն Պաիք-զափու Բալուզայի վաճառատունը, ուրկէ պիտի կրնան ստանալ հարկ եղած մանրախաւովութիւնները Դասախօսութեան առթիւ:

ԵՐԵՓ ՈՍԿԻՆՈՑ ԳԼԽԱՐԿ

ԵՒ

ԽԱՍԱՊ ՔՕԶՕ

Ապրելակերպի կարգ մը դժուարութիւններու մէջ, է՛ն մեծ տեղը կը գրաւէ, զգալ, փափաքիլ և չը կարենալը:

Ասիկայ լիւքսի, պոռոյտի և ծախսի երեսակ տեսակէտներով միայն, որոնց մէջ են՝ թական կը նեղուի, այնպէս՝ որչափ չի կրնար նեղուիլ Օգոստոսին բաղնիքին մէջ տեղը ժամերով գլխուն պոյան կերցնելու համար տիտիկ ընող տիկին մը:

Աչքը տեսածին կը բաղձայ, ստամոքսը սիրածը կը փնտռէ, մարմինը չքեղ կուգէ ծածկուիլ, և սակայն մեծապատիւ քսակը երբեմն և կամ չատ անգամ կը ժխտէ ատոնք սուգի մէջ թաթխելով ննթական:

Մի կարծէք թէ ձեր շողիկները վաղցնող այնինչ երիտասարդը իր կռնակը անցուցած քօթիւմը ճակտին քրտինքովը, և կամ քսակին թոյլտուութեամբը կը կըրէ, և դուք տիկնայք և օրիորդք, երբ ձեր դէմը ֆըշաֆը՝ հագուստներ, աչքաուռ գլխարկներ, ձեր միաքն ու ուղեղը կը խրտխրտացնեն, մի կարծէք թէ անոնք կարողութիւնէ յառաջ եկած բաներ են, այլ համոզուեցէք, դիտեցէք թէ՛ չատ անգամ այդպիսի առարկաները սեղանաւորներու ապրանքներն են, որոնք թէև ժամանակ մը կ'ուրախացնեն կըրողը, սակայն ի ձեռին դռնուած պոնօն օրը օրին ի հանդէս կուգայ, և սրտմառութիւնը, ամօթը, խախտութիւնը բարորակին կը ջրէ նախորդ լիւքսը, խըղը, ճախան, և թէ գործ չունի շախան:

Մարդ իր քսակին հարցնելու է՝ ինչ որ պիտի ընէ, և անոր հրահանէն դուրս եղած բոլոր աւելորդարանութիւնք, ինչպէս նաև անհարկի ծախքերը օր մը կէլիքնիկ կարմիրով կը ներկեն դէմքերը:

Մտիկ ըրէք հետագայ օրինակը, որ ձիշդ մատը վերքին վրայ պիտի դնէ այն կարգ մը ընտանիքներու, որոնք «չիկայ» էն չեն հասկընար ու խախք կըլլան:

Կիրակի երեկոյեան դէմ, Գալուստ աղա, ցերեկուան տաքէն և քունէն յափրացած, գիշերնոցով նստած է, տանը փողոցին վրայ նայող պատուհանին առջև, գլանիկը բերանը, մինչ նոյն պահուն կինը Լուսնայ ներք կը մանէ:

— Աս տահա նստե՛ր ե՛ս . . . չելլա՞ս հագուիս, դահէ՛ր աս կիրակի ալ տունը չաթըն տակը պիտի անցունենք . . .

— Կէճէլիկս կըռնակիս վակեր է կընիլ . . . վաղ անցիր . . .

— Սա նայէ՛ . . . քաշուելիք բան չէ ըրածդ ամա, չաբաթ մը տունը մնանք, մէկ կիրակի մը դուրս պիտի ելլանք հաւիա առնենք նէ, անոր ալ խուլք մը ույտորմիչ կընես կոր . . .

— Վերի խաթի թառացան ելե՛ր ես կընիլ, Պօղազ իչիին հովը մէջն է, գընայ նստէ տէ նայէ, ամա վրադ բան առ քըրտահա՞ չըլլաս . . .

— Նաղմա եօ՛ղ . . . էրերայ տէ պոյըտ տեսնա՛մ, չօճո՛ւկս կը խափես կոր, մէյմը անհաճո՛ղ ետիդ ձըգէ տէ, նայէ ինչեր կըսեն կոր, կէօյա՛մքի խըսխանճ ես եղեր տէ կընիլդ դուրս չես հաներ եղեր . . .

— Պերանին սլագնեմ, բէք ալ աղուոր ըսեր են, խըսխանճ եմ եմ . . . ի՛նչ գիտցար, ի՛նչ տեղը կայ քի թավուս խուչիի պէս հագուիս չքուիս առջիս իյնաս պիտի . . .

— Տիր օրի՛ . . . արեւդ սիրեմ . . . ինտոր ալ աղուոր ույտորմիչ ըրիր, դուն չէ՛ր քի թումանենց սուառէին իս զօռօլէն տարիբ տէ տիօր լուս օտա մը քաշուեցար խըռլ խըռլ քնացար, ան վախիթը խըսխանճութան խեղդ ո՛ւր էր . . .

— Հա ամա իչտէ հիւսա օռթը ներսս մը տաւ, տահա՞ . . . չօգ չէ՛յ . . . նստէ տեղըդ . . .

— Չաթլամիչ ըլլաս նէ պորտս դուրս պիտի ձգեմ ասոր, հա՛, ալթըլս քիչ մըն ալ էտէպսիգութիւնը ծառք պիտի առնեմ . . .

— Ուշքում սանայ . . . չորս պիտի ըլլայ աս պանը . . .

— Հրամաններէս, ալթըն շատ կըլլայ կորըրածդ, իս դուրս պիտի հանես, պահա մը պիտի տանիս, երկու հոգի տեսնամ մարիկ, սուռաթ մը տեսնալու հասրէթ կը քաշեմ կոր . . .

— Քա ներսի սալօնը նինէլիս խըսըմնե-րուն ֆօթօկուաֆները կան, իշտէ մէկիկ մէկիկ նայէ, մարդ, կընիկ, տեսիր էյլէնմիշ եղիր . . . Ինչ տեղը կայ քի ինծի մէկ երկու մէծիտիէ մասրաֆը կը խոթես կոր . . .

— Սընըրիս կը դպի կոր Գալուստ աղա, մարեղիք կուգայ կոր վրաս . . .

— Ուր է, ըլլար տէ իրիկուն ընէինք . . . կըսէ մուտալով խեղճ ամուսինը, մինչ տիկինը առանց հրամանի սպասելու, և կամ ամուսնոյն հաճութիւնը առնելու, հայելին դէմը կ'անցնի և կսկսի բուռնան կերքընիլ դէմքին . . .

— Կընիկ դօլայ կէլէ, ինչո՞ւ պօշ տեղը կը յոգնիս կոր, կեցիր պատանաճի թագ-ւորը կանչեմ տէ թող աղուոր մը քսէ . . .

— Խա'նախոսի, աս ալ փարայի պան չէ՞ ես . . . Ինչտար կուգեմ կը քսուիմ . . .

— Աղէկ ամա գիտնալս դուրս ելլանք նէ քովէս պիտի քալես, տեսնողն ալ Գալուստին կընիկն է պիտի ըսէ, անանկ չէ՞ . . .

— Կնիկը՝ մի՞ . . . աղջիկդ պիտի գիտնան, աղջիկդ . . . նէ իսէ ծանդ կորէ, աճապ սըրչա բառաղիւս լայըլս էիր . . .

— Խապահաթը իմս է քի մուհայէր չառի, չէնէ հիմաճուկ տիւմանովդ մօրդ կիրկը կը նէտէի քեզի . . .

— Շախա կըսեմ կոր քա Գալուստիկ, պօյըդ սիրեմ, հայտէ արեւը տառցաւ, ելիր հագուէ տէ վախտովը երթանք կէօզիւքիւր տեղ մը նստինք, տահա աս տարուան շաք-խաս մարդ չի տեսաւ . . .

— Դուրս ելլալիս բան մը չէ, կէօզիւքիւր տեղը իմ հիշ գործիս չի գար, աս ալ գիտցած ըլլաս, հիմաճուկ ես դուրս ելա՞յ մի, սատկած լէշի պէս բիւթին վրաս պիտի թափին . . .

— Քա կը սիրեն, կը յարգեն քեզի կլո-րիկ էրիկս, ան է . . . էյ աս ալ կնկան մը համար, շիտակը զուրցելով պէօպիււ պէօպիււ կալիք պան է . . .

— Կընիկ ինքզինքիդ եկուր, աս օր դուքս ելլալիք պան չեմ, հէմ իս ընէլիլ կընես, հէմ դուն քէբաղէ կըլլաս, ետքէն խպնե-լէդ, այս չոր չոր քսած բուռադ սուլու սուլու երեսդ ի վար կը վաղէ օղլում . . . եկուր տեղդ ծանրը արտիկ ըրէ . . .

— Երկինքները վար կան նէ դուրս պի-տի ելլամ, տահա՞ . . . խպնելու ինչ ու-նինք, փառք Աստուծոյ, կանակս նոր ֆիս-տան մը լիէն կըլուս նոր շաքխայ մը ունիմ, քու լաթերուդ լէքէնիւն ալ հաներ եմ, չէմ չիլէդ ալ նոր է, բօթիւններդ պօյա մը կուգէ անիւրտար . . .

— Բէք աղէկ, ես չէի ըսողը, տէ հրամմէ նայիմ, իշտէ պիտի գամ, պիտի դամ ամա՞ . . . ետքէն ընէզիլութին էլլայ նէ օթախ պի-տի ըլլաս . . .

— Ինչ ըլլա՞յ ըլլա՞յ, խաթլանմիշ պիտի ըլլամ, տահա՞ . . .

— Բէք աղէկ, աս լաթերս պեր նայիմ, ըսելով, աղա տուտու կը պատրաստուին, կիրակիի պտոյտ մը ընելու համար դէպ ի հոն, ուր ժողովուրդը կը դիմէ առ հասարակ . . .

* * *

Ընդարձակ պարտէզ մը, որուն մէջտեղը Եւրոպական նուազը կը գոռայ, խուռն երկ-սեռ բազմութիւն մը եկած լիցոյցած են ա-թոռները, և մէն մի սեղան գրաւուած է բազմանդամ ընտանիքներէ : Սպասաւորները արեան քրտինքի մէջ հազիւ կը հասնին ե-ղած քօմանտներուն, ժամը տասն և մէկին մօտ է, և խրախճանութիւնը իր ծայր աս-տիճանին հասած :

Գալուստ աղա և տիկինը մեծ դռնէն ներս կը մտնեն, և առաջին քայլին տիկինը կսկսի « ես իշտէ կընիկ եմ » ձեւերը առ-նել, մինչ ամուսինը բառաբոլին թեւին, սպանդանոց տարուող ոչխարի մը պէս սը-խուր ու մտահոգ քովէն կը քալէ, աչքը չորս գին քաշուած տեղ մը որոշելու համար : Վերջապէս պարտպ սեղան մը գտնելով կը նստին, ու կառսօնը մեղր տեսած մե-ղուի մը պէս կը թառի մօտերին . . .

— Պիւսա խըմնք Գալուստ աղա, քիչ մընալ խափար թող բերէ, սթախօզ, ճամ-բօն, խութի սառաւելասի, տահա ինչ գիտ-նամ, դուն ալ ըսէ . . .

— Հարսը փեսան ուր են, երբ պիտի գան քի . . .

— Կէնէ մի պաշլայէր, սուոր աստեղը զանէր չըւողը առնենք նստինք պիտի, օյ յունա չըգան օյնայաճագ, հէմ կարճ կապէ, ամէնքը մեզի կը նային կոր . . .

— Կընիկ ինչ կըսես կոր, խանութիս էլաթնիւրը ծախել պիտի տաս ինծի . . .

— Ըսածներս պիտի գան, քէբաղէի պէս չեմ կրնար ասանկ տեղը նստիլ . . . հայտէ կառսն ըսածներս բեր, խալեար, պիւռա, ճամպոն, սառտէլա, քիչ մըն ալ թէրէ եաղի . . .

— Պիւռան սրաթէն պիտի ըլլայ . . .

— Պէ օղլում, սրաթի, մաչա, քուրա, ինչ բերես նէ բեր, ինչ զիտնամ . . .

— Կեցիք նայինք, աղէկը ո՛րն է նէ ան թող պերէ . . .

— Իշտէ սրաթի բերեմ մատամ . . . պագ պուղի պէս . . .

Ու մինչ կառսնը բերելու կըլլայ ապըսպըրուածները, Գալուստ աղաի աչքին կը հանդիպի ցուցակը ըմպելիներուն .

— Սրաթի պիւռա 10 ղրշ

— Խալեար 4 »

— Ժամպոն 4 »

— Ըսթաքող 4 » և ին .

— Ինծի նայէ կընիկ, սա թառափը նայէ մէյ մը . . .

— Տեսայ տեսայ, աղէկ օր քի չիմեր եմ, չէնէ խախը պիտի ըլլայի, ամա հիչ երեսին չէ գացեր, քիմ պիլիւր քանի օսկի-նոց է . . .

— Ո՛ւր կը նայիս կոր քի, սա զիմացի լիսոտան նայէ . . .

— Ճանրմ, Սուրբիկին չարխային համար չեմ . . .

— Անկէ առաջ սո իչկիներուն լիսթան նայէ մէյ մը, սրաթին, քուրան, մաչան, օրեան, բիւթին գրուած է . . .

Տիկինը կը նայի, կը կարդայ :

— Թամամ, տահա աղէկ եա բաղարլըխ չիգայ, հոն ինչ գրուած է նէ ան պիտի տանք . . .

— Աղէկ ամա աս շարթու խասապին փարայ չի տուի տէյի միսը չի տուաւ տէ, աս տաքուն տալըն առի խալարիս . . .

— Էյ ճանրմ մեռաքս կեղլայ կոր, աս

տեղը տունին զանցային վրայ խորաթելու տեղ է . . . չօգչէյ . . .

Կառսնը խմելիք ուտելիք բոլորն ալ կը բերէ . . .

— Կը խոյնիմ կոր կընիկ, ամէն մարդ ինծի զիտէ քի տիւղ ըռախին խայէխէն կառնեմ տէյի, աս ինչ չափչափի մատայ է . . .

— Կընիկով դուրս ելողը ասանկ պէտք է քի ընէ, չիյտես նէ սովրէ, կընիկ դանը-ռած մասային վրայ սիւռա կը խմեն, տիւղ ըռախի չեն բաթլամիշ ըլլար . . . լեցուր նայիմ . . .

Նոյն ատեն կառսնը քիւս պուշոնով չիչը կը բանայ և բաժ . . . ճայնը ելլալուն ամէնքը ասդին կը նային :

— Տեսա՛ր, հէլալ ըլլայ տուած տասը ղրուշնիս, նայէ ներս մտանք մարդ չի տեսաւ ամա, պիւռային ֆըշ տէյի ծանին բիւթին մեզի նայեցան, ֆիստանա ալ տեսան շարխաս ալ . . . , քէչկէ մէտալեծոս զրած ըլլայի, հիմա ան ալ տեսած պիտի ըլլային . . .

— Կընիկ առջիդ նայէ, կետինին տակը կանսիմ կոր . . . խասապը հոս է եղեր . . .

— Սո՛ւս, չեղլաս քովդ կանչես, եանի դող կեղլամ . . .

— Ինչ կըսես կոր, խապիլը դոնամ նէ խկէրմիին տիւղ պիտի ամսիմ չի տեսնայ տէյի ալա, տիք տիք սպաթիին կը նայի կոր, վախնամ ան ալ օրեա խող պիտի պանայ . . .

— Դուն ալարբմիշ մընէր, պիւր տիւղ իմ կրեսս նայէ . . .

— Կընիկ մարդը այախլանմիշ եղաւ, թէզպէլը ծառքը տիւմէնը մեր թառափը տառցուց . . .

Ու մինչ աղա տուտու մաալաճառին վրայօք կը ճառէին, մարդուկը մօտեցաւ իրենց :

— Բալիսպէռասաս Գալուստ աղա . . .

— Ինծի բռէղանթէ ըրէ մարդուն, պաչխա պանի մի խառնուիր . . .

— Ագչամլար հայըր օլսուն ուստա Բօսթի, պիլիմ մատամ . . .

— Աղնատըմ ամա պիլիմ հիսապլար նասը օլաճագ, տահա պէքլէյիմ մի . . .

— Պու արալըգ պիրուգ բարոճա միւղայիքատայըմ տա . . .

— Բա ինչ տէյի մուգիգան մէջ կը խառ-

նես կոր . . . կըսէ կինը , և ինք խօսք առնելով . . .

— Վերերիզ , ուստա Բօջօ , վերերիզ , մէնազ էթմէ , մարդուն պիտա մը տուր . . .

— Պուշուրուն , ուստա Բօսթի , պիր պիտա' . . .

— Ծանխմ' նէ եարայրմ' պիտա , պիզիմ հիսա'պ , պազ նէ պիտա իշխօրսընըզ տա պէնխմ' փարամը . . .

— Խալեարը առջին քչէ . . .

— Մէնսի ծանրմ' . . . պիզիմ չու ալաճազ . . .

— Ժամպօնը պատառ ըրէ տէ առջին ղիր . . .

— Հիչ տա կէօղիւքմէտինիզ . . .

— Խատեխ մընալ լեցուր . . .

Անոնք , բրոնք կը տեսնային այս երեքը , գահգահներ կը ձգէին չորս հովերուն , մինչ Գալուստ աղային կինը , որպէս զի մարդուկը դրամի խօսք չընէ , կը զիջանէր մինչև իսկ անուշ նայուածքներ ձգել խասապին երեսն ի վեր , որմէ կը թուլնար , կը վերանար ուստա Բօջօն .

Առաւօտուն կանուխ , երբ Գալուստ աղա գուլպաները կը հագնէր , միջօ մը կէս ոչխար կը բերէ տուն , Բօջօին տաք բարեւներովը ծրարած :

— . . . Երէկ իրինկուն քօնչինային մէջը սպարին որին վրայ մնաց . . .

— Բօջօին . . .

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՆՈՐ ԹԵՐԹՕՆԸ

Ինչպէս ծանուցինք մեր նախորդ թիւին մէջ , յաջորդ թիւով կ'սկսինք մեր նոր թերթօնը :

ԿԱՊԻԿՆԵՐՈՒ ԱԺԽԱՐՅԻՆ ՄԷՋ

որուն ընթերցումը կը յուսանք թէ՛ ախորժելի պիտի ըլլայ ամէն անոնց , որոնք կը սիրեն ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆԸ , ԶՈՒԱՐՃԱՂԻՆ և ՀՐԱՆՈՒԳԻՏԸ :

Ուրեմն յաջորդ թիւով՝

ԿԱՊԻԿՆԵՐՈՒ ԱԺԽԱՐՅԻՆ ՄԷՋ

ԱՐԾԵԱԳ

Լեւան ետին հորիզոնը կարմրի ջանքընելով ոսկի ցոլեք դէս ու դէն , Բրնուքիւնը խայտայ բերկրի գերդ հուրի Թըռչունք երգեն ո՞ն ժրպագին երկինքէն :

Ո՛հ , ի՞նչ դիւքանք կանանչ հազած լեռ ու սար , Ծաղկունք հովսաց օրնչեն հեւքը գեփիւռին , Նոր կեանք կ'առնեն համակ եակք հաւասար Ամեն հոգւոց յոյգեր տակաւ կ'անհետին :

Ամպեր կ'առնեն գոյնը բոստ արեւին , Պահ մ'փայլելու վրայ երկրնքին վեհօրէն .

Անհետանալ առանց բողոյ հետք մը սին Անձայրածիր անհունութեան մեջ նորէն :

Ամբողջ աշխարհ լրօնի փունքն արբընցած Նոր եռանդով իրենց գործերուն կերպան , Ամեն եակք բընագողով մը , ո՞վ Աստուած , Սընունդ գրքնել փութան խանդիւ ի մի բաշ :

ՄԹՆԾԱԳ

Կը փարատի մութը բանձր հեգասան , Պատրոսելով մայր արգանդը քառսին .

Ամպի կոյսեր քմոյն ամպեր ու՛ր կամ վաղ , Զեփիւռին նուրբ հեւքէն մէ՛յ մ'ալ կ'անհետին : Հորիզոնը համակ կապոյս , ի՞նչ դիւքանք , Զեփաղագեղ պարզութեամբ կերելի , Եւ բընութեան քրոջունք ամեն կառնեն կեանք , Օրհնել փութով Արարիչը կորովի :

Ըստուեալիս ծառոց մեջէն քրոջնիկներ՝ Իրենց աղու ձայնով խանդոս կ'երգեն միւս . Որքան հեռանք կ'երգեն անոնք քաղցրիկ սէր , Կեանքի մասին չունենալով բընաւ վիւս :

Սպկայն օրիորդ առանձնացած մեջ խցիկին Լըռիկ մընչիկ անկողնոյ մեջ անբարբառ , Անըրջային սին յոյսերով կ'օրորուին , Յոյսեր որոնք տանջեն հոգին վայրապար :

Բեկիր

ԱՐԾԱԿ Գ. ԻՍԿԵՂԵՐԱՆ

ԱՐՏՈՐԱՔԻ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի Եասէսի Թ. 23

ՄԵՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԿԱՆԱԿԱՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբ Զատնի, Թոփաղեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանքային ապրանքներով եւ գինեւորական անմրցելի ապրանքներով շահած է բոլոր իրեն գիտող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց թելադրանքներու եւ տղայոց շիք եւ գիւմարակոն ֆուքիւսներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ ջերմագէտ կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի եւ ուրիշ նմանօրինակ պիտոյից .

ապակՍրկո լթիւն չկայ, թիւը 2 դրչ է .
Գաւառներէն յանձնարարութիւնք յուրմով կը կատարուին .

41—50

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան, վրայ չեն ելներ, գոյներնին չեն նետեր, ջուրի եւ անձրեւի կը դիմանան, միւսկները կը ջնջեն եւն. եւն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 10—15 փարայ .

Ներսի եւ դուրսի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 20—30 փարայ :

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախորդաց զիւրութեան համար, վաճառատունս պատրաստ է առջն գնեցող իր վրայ առնել ամէն դարձ, թէ ներկն եւ թէ գործառնողէն մէջն ըլլալով :

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-Համամ, Պաղ-Եր-ճըլար թիւ 26, Գ. Աճեմեան : — Գաւառները գործակալներու պէտք կայ, գիւրամատչելի պայմաններով :


6—20

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ՍԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, Պահճեֆափու, ձեյալ-Պեյ խան, քիւ 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ
Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն
ԱՍԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒՍԳԱՐՍՆԱՑ ԵՒ ՊԵՏՈՑԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ո Ր Ա Ր Ա Ր

Ֆոնոկրաֆի եւ Գլաններու Կրամֆոնի
եւ Էրկիդմ Բլագներու, Կեդրոնա-
տեղի Պահճե Գաբու, Հաճի Պեքիւ
ԼՅԱՆՈՒԻ Կիւ, Նալուզ խանի սակ
քիւ 2: Մասնաձևի Պահճե Գաբու
քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
գրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և Էրկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
Կեդրոնատեղին: